

ՊԸՏՄՈՒԹԻՒՆ ԼԸՉՍՐԵԱՆ ՏՈՂՄԻ

ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Աշխատանքից՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԻՍՅԱՆ

(Շարունակութիւն:)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ե.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԱՋԻՆ 25ԱՄԵԱԿՈՒՄ (1865—1890)

Այս 25ամեակում, ինչպէս եւ հետագայում՝ մինչեւ իր գոյութեան վախճանը՝ 1918 թ., ձեմարանը չի ենթարկուել որ եւ է ցնցումի կամ լուրջ փոփոխութիւնների: Նրա կեանքը ընթացել է խաղաղ ստեղծագործ աշխատանքների մէջ, որով աւելի եւս մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել հայ եւ ուսու հասարակութիւնների մէջ: Այդ ժողովրդականութեան առաջին հետեւանքը եղել է այն, որ աշակերտների թիւը աստիճանաբար աճելով 1890 թ. հասել է 300 հոգու, որոնցից գիշերօթիկների թիւը միշտ գերակշռել է երթեւեկների թուի հետ համեմատած, իսկ գիշերօթիկների մէջ հայ երեխաները կազմել են ահագին մեծամասնութիւն: Աշակերտների այս քանակը պահպանուել է մինչեւ վերջը:

Հին շէնքի տարողութիւնը այդքան աշակերտների համար անբավարար էր, ուստի ձեմարանի վարչութիւնը ընդարձակել էր նոր կից շէնքերով: Կառուցուել էր հսկայ դահլիճ մարզանքի համար, իսկ նրա վերին յարկում՝ երկու մեծ սենեակներ, որոնք յետագայում յատկացուեցին գիշերօթիկ աշակերտութեան սերտողութեան ժամերի համար: Այն նոր շէնքը կառուցուեց Բեսարաբեայի հայ կալուածատէր Մանուկ Բէյի նիւթական միջոցներով: Այս իսկ պատճառով մարզանքի ընդարձակ սրահը կոչուում էր՝ «Մանուկ Բէյի սրահ»: 1928 թուին այս սրահն ու վերի երկու սենեակները հրդեհի ճարակ էին դարձել:

ձեմարանի նախկին Կանոնադրերի որոշ յօդուածներ դեռ շարունակուել էին պահպանել իրենց ոյժը եւ ստեղծել շփոթ. հարկ զգացուեց ընդհանուր վերաքննութեան ենթարկել բոլոր եղած Կանոնադրերը, սկսած

1848 թուից, եւ մի վերջնական ամբողջական Կանոնադրի տալ ձեմարանին:

Այս նպատակով Հոգաբարձուի կարգադրութեամբ կազմուել է յատուկ յանձնաժողով վերատեսչի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ տեսչի, դասատուների ու պրոֆեսորների:

Այդ յանձնախումբը իր աշխատանքները աւարտում է դեկտեմբեր 14ին, երբ արդէն կնքել էր իր մահկանացուն ձեմարանի վերջին հոգաբարձուն՝ Սաչատուր Յովակիմեան Լազարեանը:

Այս նորամշակ Կանոնադրը կայսերական բարձրագոյն հրամանով հաստատուել է 1872 թ. 16 դեկտեմբերին, որով առաջնորդուել է այնուհետեւ ձեմարանը մինչեւ 1918 թ.:

Այս Կանոնադրի մշակման ու վաւերացման մեծապէս նպաստել էր ինքը ղլխաւոր Կառավարչապետը՝ Ժողովրդ. լուսաւորութեան նախարար Կոմս Տոլստոյը, որեւ անմիջապէս Կանոնադրի հաստատումից յետոյ ներկայացնում է իր հրատարականը — ղլխաւոր Կառավարչապետութիւնից, քանի որ Նոր Կանոնադրով այդ պաշտօնը վերացուել էր եւ ձեմարանը ենթարկուել էր ժողովրդ. լուսաւորութեան նախարարութեան:

Այդ առթիւ ձեմարանը 1873 թ. փետրուար 12ին շնորհակալական սրտառուչ ուղերձ է ներկայացնում կոմս Տոլստոյին այն մեծ ստեղծագործ ու բեղուն աշխատանքների համար, որ կոմսը ցուցադրել էր իր Կառավարչապետութեան եռամեայ գործունէութեան ընթացքին յօգուտ ձեմարանի:

1881 թ. յունիս 23ին վերատեսուչ Դեյիմովը թողնում է իր պաշտօնը, շրջապատուած ընդհանուր անկեղծ համակրանքի զգացումների արտայայտութիւններով ուսուցչութեան եւ աշակերտութեան կողմից:

Նոյն տարին վերատեսչի պաշտօնը ստանձնում է ձեմարանի տեսուչ Գէորդ Քանանեանը, որը մնում է այդ պաշտօնի մէջ մինչեւ իր մահը՝ 1897 թ., թողնելով լուսագոյն յիշատակներ ձեմարանին բերած իր բազմամեայ բեղուն գործունէութեամբ եւ իր առանձին հոգատարութեամբ ձեմարանի գիշերօթիկ աշակերտների մասին: Միշտ բարե, միշտ ուշադիր զէպի նրանց կարիքներն եւ հեղինակաւոր պաշտպանը նրանց շահերի:

ձեմարանի 75ամեակին՝ 1890 թուին իր արտասանած ճառի մէջ, նա հետեւեալ կերպով էր նկարագրել ձեմարանի վիճակը, երկրորդ յիսնամեակի առաջին 25ամեակում.

պով էր նկարագրել ձեմարանի վիճակը, երկրորդ յիսնամեակի առաջին 25ամեակում.

— «Վերջին 25ամեակում ձեմարանը տուել է 250 հոգի ուսումնաւարտներ: Ներկայումս զիննազիտական դասարաններում ուսանող աշակերտների թիւը հասել է 300 հոգու, որ աննախընթաց է ձեմարանի պատմութեան մէջ: Գիշերօթիկ աշակերտների թիւն էլ հասել է մի այնպիսի աստիճանի, որից աւելին անհնարին է տեղաւորել ձեմարանի ներկայ շէնքում: Աշակերտութեան բարոյական վիճակը կատարելապէս մխիթարական է ու դոհուեակութիւն է պատճառում զպրոցի դեկավարներին: Մէք դէպի աշխատանք, համեստութիւն ու բարի ուղղութիւն, որին հետեւում են մեր սաները, հանդիսանում են նրանց յատկանշող գծերը: Բացի մի քանի բացատրիկ դէպքերից, որոնք պահանջեցին կարգապահական խիստ միջոցներ կիրառել, մենք չենք կարող մատնանշել մի հատիկ անմխիթարական երեւոյթ: Աշակերտների յառաջադիմութիւնը, որը չափուել է նրանց վերջնական քննութիւնների տուած արդիւնքով, իսկ այդ արդիւնքը դնահատուած է՝ ձեռնհաս իշխանութեան կողմից, վկայում է, որ զիննազիտական կրթութիւնը ձեմարանում դրուած է ամուր հիմքերի վրայ եւ որ ձեմարանը պատուով կը դիմանայ ամէն համեմատութեան, ամենալուրջ պահանջներ իսկ ներկայացնելով: Ծնողների վերաբերմունքը դէպի մեր զպրոցը վեր է ամէն ակնկալութիւններից՝ նա հիմնուած է կատարեալ վստահութեան ու համակրանքի վրայ դէպի մեր զպրոցը:

«Մասնազիտական դասարանների (լիկէոնի) ուսանողներին անդրադառնալով, մենք կարող ենք մատնանշել այն մի շարք միջոցները, որոնք երաշխաւորել են արեւելեան լեզուների ուսումնասիրութեան լուրջ յառաջադիմութիւնը: Մեր ձեռքում կան պաշտօնական փաստաթղթեր, որոնք վկայում են, որ մեր մասնազիտական դասարանների շրջանաւարտների ուսման մակարդակը հասել է բաղձալի բարձրութեան եւ նրանք ոչ մի բանում համալսարանների ուսանողների ուսման մակարդակից ցածր չեն: Ամենից մխիթարականը այն է, որ ձգտումն դէպի մասնազիտական դասարանները այլ եւս չի պայմանաւորուած, ինչպէս անցեալում էր, ծառայութեան արտօնութիւններ եւ իրաւունքներ ստանալու ակնկալութեամբ, այլ

զիտակից ցանկութեամբ ուսումնասիրել արեւելեան լեզուները:

Արեւելեան լեզուների յաջողութիւնը առաջ է բերել պահանջ կազմակերպել երեկոյան դասընթացներ բաւարարելու համար կողմնակի ունկնդիրներին, որոնք ցանկութիւն ունին սովորելու այս կամ այն արեւելեան լեզուն»:

1890 թ. դեկտ. 20ին ձեմարանի Պատուակալ Հոգաբարձուի եւ Պետերբուրգի ու Մոսկուայի Հայոց Եկեղեցիների հոգաբարձուի պաշտօնների մէջ է հաստատուել իշխան Սիմէոն Դաւիթովիչ Աբախիլիքը, վերապահելով նրան իրաւունք կոչուելու՝ Աբախիլիք-Լազարեա եւ այդ կոչումը պահպանելու իր տոհմի մէջ:

Այդ 25ամեակում ձեմարանին այցելութիւն են տուել՝ Պարսից Նասրէդդին Շահը, Բրատիլսկայի կայսր Դոն-Պետրօն, ուղեկցութեամբ ժողովրդ. լուսաւորութեան նախարար կոմս Տոլստոյի, կոմս Միքայէլ Տարիելովիչ Լօբիս-Մելիքովը, Ասիական դեպարտամենտի պետ Ջինովելը, — երկուսն էլ ձեմարանի նախկին աշակերտներ, — Եւրոպական գիտնական-ասորագէտ Ժիւլ Օպպերտը, արեւելագէտ Փոն Միւլլէրը եւ ուրիշները:

Այս այցելութիւնները պարզ ցոյց են տալիս, որ ձեմարանը շարունակում է մնալ ընդհանուր հետաքրքրութեան եւ ուշադրութեան առարկայ:

Մեր խօսքը փոքր ինչ առաջ տանելով, ասենք, որ Գ. Քանանեանի մահից յետոյ վերատեսուչ Նշանակուեց Մոսկուայի համալսարանի ուսուցչապետ եւ ակադեմիկոս գիտնական Վսեվոլոդ Միլլէրը, որը մի բարեսիրտ, մեծահոգի, ազնուաբարոյ ու կատարեալ հումանիտի բարձր նկարագրով անձնաւորութիւն էր:

Նրա վերատեսչութեան օրով ձեմարանի աւանդական միջոցաւորը որեւէ փոփոխման չենթարկուեց:

Բայց, ցաւօք սրտի, բոլորովին հակառակ շունչ փչեց, երբ նրան յաջորդեց Պրոֆ. Վասիլի Գիլյուլեանովը, որպէս վերատեսուչ (директор), իսկ տեսչի (инспектор) պաշտօնով հրաւիրուեց հայ անուանի հայագէտ Կարապետ Կոստանեանը 1911 թուին:

ԳԼՈՒԽ Զ.

Երկուսն էլ չոր ու ցամաք բերողը...

Պրոֆ. Գիդուլեանովը շատ քիչ էր հե- տաքըրբում աշակերտութեան կեանքով...

Սրանց իշխանութիւնը վերջ գտաւ 1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութիւնից...

\*

Ճեմարանի վերջին 25ամեակի մասին մեր գրածները մեծ մասամբ մեր եւ Թեհրանում գտնուած Ճեմարանի նախկին սաների յուշերի վրայ են հիմնուած...

Պիտի սպասել մինչեւ Երեւանի Հայոց կառավարութիւնը վերջապէս հրատարակու- թեան կը տայ Լազարեանների ու Ճեմարանի հարուստ արխիւի նիւթերը կամ Երեւանում կը գտնուի մի ձեռնհաս անձ, որ յանձն կ'առնի գրելու Ճեմարանի լրիւ պատմու- թիւնը, օգտագործելով այդ արխիւը:

Ընդհատելով այստեղ Ճեմարանի մեր այս շատ հակիրճ պատմական ընդհանուր ակնարկը, անցնում ենք մի քանի մասնաւոր կարեւորագոյն խնդիրների լուսարանութեան, որոնք սերտորէն կապուած են Ճեմարանի 75ամեայ ներքին կեանքի հետ եւ որոնք լրաց- նում եւ ամբողջացնում են մեր այս ընդհա- նուր տեսութիւնը:

Լ. ՃԵՄԱՐԱՆԸ, ՈՐՊԷՍ ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ՎԱՌ ՀՆՈՑ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՅԱՌԱՋԱԿԻՄՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՕՆ

Ճեմարանի հիմնադրութիւնն ու գոր- ծունէութիւնը Մոսկուայում՝ «Ռուսաստանի սրտում», Ռուսաստանի մշակութային, հա- սարակական-քաղաքական կեանքի կենտրո- նում, հարկաւ, չէր կարող զերծ մնալ այս կամ այն չափով նրա բարերար ազդեցու- թիւնից: Եւ զերծ էլ չմնաց:

Ճեմարանը հիմնուել է Ռուսաստանի եւ Եւրոպայի քաղաքական կեանքի մի շատ նշա- նաւոր ժամանակաշրջանում:

1812 թ. հայրենական պատերազմը Նա- պոլէոն Ա. կայսեր աշխարհակալութեան դէմ, Վրեհնայի 1814—1815 թ. Վեհաժո- դովը, իր «Սրբազան Ուխտի» ճնշող ու յե- տադիմական շունչով, Մետտերնիխի բռնա- կալական միջամտութիւնները պետութիւն- ների ներքին կեանքի մէջ եւ ազգային շար- ժունների ջանքերով՝ կործանարար ազ- դեցութիւն ունեցան Ալէքսանդր Ա.ի ազա- տախոհ տրամադրութիւնների վրայ...: Նա աստիճանաբար խորասուզուեց միախլիցով մէջ, դադարեց գործօն հետաքրքրութիւն ցուցադրել պետական գործերի մէջ եւ կա- ուովարական ամբողջ իշխանութիւնը վերա- պահեց կոմս Արակչէեւին, որը, շուտով իր անասհաման իշխանութեան վրայ յենուելով, դաժան պայքար մղեց ամէն մի ազատախոհ մտքի ու ձգտումների դէմ...:

Եթէ Եւրոպայի եւ Ռուսաստանի կառա- վարական շրջաններում տիրում էր ամենա- յետադէմ ձգտումներ ու տրամադրութիւն- ներ, ապա միանգամայն այլ տրամադրու- թիւններով էին վարակուած հասարակական շրջանները, յատկապէս ու ազատատենչ մտաւորականութիւնը:

Փրանսիական մեծ Յեղափոխութեան թո- դած ազատախոհ աւանդները դեռ շատ թարմ էին ամենուրեք: Ռուս ազնուական մտա-ւորականութիւնը մասնաւորապէս վարա- կուած էր յեղափոխական տրամադրութիւն- ներով: Հայրենական պատերազմը, որ սերտ շփումների առիթներ տուեց ուսու սպայու- թեան ծանօթանալու աւելի մօտիկից եւրո- պական քաղաքակրթութեան եւ նրա մտաւո- րական շրջաններում տիրող ազատատենչ

ձգտումների հետ՝ բաց արեց նրա աչքերը հայրենիքում տիրող հասարակական-քաղա- քական անհանդուրժելի կացութեան վրայ:

«1812 թ. հայրենական պատերազմի ժա- մանակ, — ասում է ուսու պատմաբան Պրոֆ. Պլատոնովը, — ուսու գործը իր մէջ առա- բազմաթիւ ազնուականներ հայրենիքի պաշտ- պանութեան համար, իսկ կոիւնները, մղուած Եւրոպայի ազատագրութեան համար (Նապո- լէոնի իշխանութիւնից), չփման մէջ զբին ուսու գործի մէջ ծառայող ազնուականներին եւրոպական կեանքի հետ: Առաջ ուսու մար- պա, իսկ ազատագրական պատերազմի ժա- մանակ շատերը մնացին այնտեղ եւ երկար ժամանակ ապրում էին այնտեղ: Հասկանալի է, որ նրանք ենթարկուեցին եւրոպական կարգերի ուժեղ ազդեցութեան, մօտիկից ծանօթացան ժամանակակից մտաւոր շարժ- ման հետ եւ իրենց հետ Ռուսաստան բերին ամբողջ գրադարաններ: Եւրոպական հասա- րակական կեանքի յատկապէս մտածելով, որ հետեւանք էր 18րդ դարի ազատամիտ դադա- փարների ազդեցութեան, գերմանացիների ազդեցին գիտակցութեան զարգացումը, գեր- ման փիլիսոփայութեան փթթումը՝ վարա- կում էին ու հիացնում ուսու մարդկանց: Հա- մեմատելով եւրոպական կեանքը հայրենի- քում տիրող կարգերի հետ, մեր նախահայ- րերը սկսեցին քննադատական աչքով նայել ուսու իրականութեան վրայ, անտուժ էին նրա պակասները, նրա յետամնացութիւնը, գիտակցում էին, որ արդէն հնացած էր ճոր- տատիրական իրաւունքը, որը կազմում էր ուսու հասարակական կարգերի հիմքը եւ որն Արեւմտեան Եւրոպայում վաղուց վերացել էր<sup>1</sup>»:

Ահա այս տպաւորութիւնների ներքոյ էր, որ Ռուսաստանում սկսուեցին ուժեղ հասա- րակական-քաղաքական շարժումներ, որոնք մի կողմից արտացոլուեցին գրական-գեղա- րուեստական մարզում, միւս կողմից ընդու- նեցին յեղափոխական ընդթ...: Ռուս ազ- նուական յատկապէս ու ազատախոհ մտա-ւորականների շրջանները, տողորուած հան- րապետական-ժողովրդավար դադափարնե- րով, կամեցան բռնի կերպով ոչնչացնել ցարական բռնապետական ընթիւմը եւ առա- ջին հերթին վերացնել ճորտատիրութիւնը:

<sup>1</sup> Տէ՛ս Պրոֆ. Պլատոնով (Платонов), «Ռուս պատմութեան համառոտ դասընթացը», էջ 353—354:

Յայտնի է, որ այս վերջին շարժումը յանգեց 1825 թ., Ալէքսանդր Ա. կայսեր մահից ան- միջապէս յետոյ, այսպէս կոչուած Դեկա- բրիստների ապստամբութեան, որը սակայն վրիպեց եւ նոր կայսեր՝ Նիկոլայ Ա.ի ձեռ- քով դաժանօրէն զսպուեց...<sup>2</sup>:

Չնայած Նիկոլայ Ա.ի դաժան ուժիմին, ուսու հասարակութեան մէջ չմեռան իսպառ ազատատենչ դադափարներն ու ձգտումները. նրանք իրենց արտայայտութիւնը գտան ուսու գրականութեան մէջ:

«Ռուս գրականութիւնը, — ասում է Իվանով Ռազումնիկը, — եղաւ այն ֆոկուսը. որ հաւաքում էր իր մէջ կեանքից ցոլացող քառագայթները»:

Եւ արդարեւ, 40ական եւ 50ական թուա- կաններին ուսու գրականութիւնը հասաւ այն- պիտի վերելքի, որ տուեց մտքի եւ գեղա- րուեստի, այնպիսի մեծ տաղանդներ, որ- պիսիք էին՝ Բէլինսկի, Հերցէն, Օղարեով, Ստանկեւիչ, Ակսակով, Խոմեակով, Չաա- դաւեւ եւ ապա Չերնիշևսկի, Դորբոլիբով, Բակունին, Գրանովսկի եւ մի շարք ուրիշ- ները:

Գրողների այս փայլուն փաղանգն էր, որ նախապատրաստեց ուսու հասարակական կարծիքը 60ական թուականների մեծ բարե- փոխութիւնների համար:

Գրականութեան մէջ կարմիր թելով անցնում էր մի գերագոյն միտք՝ պիտի ոչնչացնել ճորտատիրութիւնը, մեծագոյն շարիքը ուսու կեանքի եւ խոչընդոտը հայրե- նիքի յառաջադիմութեան:

Գրականութեան գորավիզ եղան քաղա- քական զէպքերը, առաջին հերթին՝ Ղրիմի պատերազմը (1855 թ.), որ միանգամայն բացայայտեց ցարական բռնակալ ուժիմի պարտութիւնը, տիրող հասարակական-քա-ղաքական կարգերի կատարեալ անպէտքու- թիւնը: Միւս կողմից, այդ պատերազմը մե- ծապէս նպաստեց ժամանակի յատկապէս դադափարների ու ազատախոհ տրամադրու- թիւնների զօրացմանն ու տարածմանը հա- սարակութեան լայն շրջաններում:

«19րդ դարի երկրորդ քառորդի սկիզբը — ասում է Իվանով Ռազումնիկը — նշանա-ւոր էր մի շարք կարեւորագոյն զէպքերով, մի շարք յեղաշրջումներով: 1825 թուականը

<sup>2</sup> Դեկաբրիստների շարժման մասին տե՛ս մեր յօդուածը՝ «Յուսարեր», 1828 թ. Հոկտեմբեր-նոյեմբ- րեր:

հանդիսանում է սահմանը, որտեղից սկիզբ է առնում նոր քաղաքական սիստեմ, նոր պետական ժամանակաշրջան. դա մի տարի էր, երբ քաղաքական յեղաշրջման փորձը վրիպեց, բայց եւ մի տարի էր, երբ վերջ դառաւ պայքարը գրական քաղքէնիութեան դէմ. դա, վերջապէս, մի տարի էր, երբ յեղափոխական բոմանտիզմը եւ բոմանտիկ ազատամտութիւնը կորուստի մատնուեցին, երբ փշացաւ ուսու մտաւորականութեան լաւագոյն մասը եւ երբ ծնունդ առաւ նոր մտաւորականութեան, որ տուեց այնքան հարուստ պտուղներ<sup>3</sup>»:

Ահա՛ այս նոր մտաւորականութիւնն էր, որ ստեղծեց 40ական եւ 50—60ական թուականների հասարակական մեծ շարժումը:

Այս մտաւորականութեան ուսուցիչներն էին՝ եւրոպական ականաւոր փիլիսոփաները՝ Կանտը, Ֆիխտէն, Փուրիէն, Ֆէյերբախը եւ նա մանաւանդ Հեգէլը. որը բացարձակապէս իշխում էր մտաւորականութեան մտքի վրայ:

«Հեգէլի փիլիսոփայութիւնը, — ասում էր Հերցէնը, — յեղափոխութեան ալգորիթմն է. նա միանգամայն ազատագրում է մարդուն եւ քար քարի վրայ չի թողնում ոչինչ քրիստոնէական աշխարհից, աւանդութիւնների աշխարհից»:

«Պատմութիւն 19րդ դարի ուսու գրականութեան» հեղինակ Նազարէնկոն բացատրում է Հեգէլի այդ միտքը, ասելով՝

«Հերցէնը, բնորոշելով Հեգէլի փիլիսոփայութիւնը որպէս յեղափոխութեան ալգորիթմ, ուզում էր ասել, որ նրա մէջ պարփակուած է յաւիտենական պայքարի, զարգացման եւ յառաջադիմութեան դադարփարը<sup>4</sup>»:

Ահա՛ այն մթնոլորտը, որով շրջապատուած էր Լազարեան ձեմարանը իր ուսուցիչներով, իր աշակերտութեամբ եւ իր նախկին սաներով՝ Մոսկուայի համալսարանի հայ ուսանողներով:

Եւ պարզ է, որ ձեմարանը եւս շնչում էր նոյն մթնոլորտը, ապրում էր նոյն մտաւոր ու բարոյական զաղափարներով, որոնք նրան մղում էին դարձնելու իր հայեացքը հայ իրականութեան վրայ:

<sup>3</sup> Տե՛ս Իվանով-Ռազունիկ, «Պատմ. ուսու հասարակական մտքի», էջ 92:  
<sup>4</sup> էջ 213:

Յաւօք սրտի, մեր գրականութեան մէջ ուսու յառաջադէմ մտքի ազդեցութիւնը հայ կեանքի վրայ ուսու մտաւորութեանը հայ պէս, առաւել եւս նրա ազդեցութիւնը ձեմարանի կեանքի վրայ:

Կան միայն փշրանքներ, որոնցից մի քանիսը առաջ ենք բերում:

«Պետական կեանքն էր մղումներ տալիս ե՛ւ մեր կեանքին, — գրում է Լէօն իր «Պատմութիւն Երեւանի թեմ. դպրոցի» երկի մէջ. — Ղրիմի պատերազմը ուսու կեանքի փորձաքարն ու վերանորոգիչը հանդիսացաւ: Բարձրագոյն հնացած կարգերի հետ աւանդութիւնների շարքն էր մտնում եւ դասակարգային դպրոցը՝ չինոփիլիներ պատրաստելու ու ժողովուրդը դաստիարակութիւնից հեռու պահելու ձգտումներով: Ժողովրդական ազատ ազգային դաստիարակութիւնը, համամարդկային հումանիտար զաղափարները՝ նոր դպրոցի հիմնաքարերն էին դառնում եւ մանկավարժութիւնը, ընդգրկելով եւրոպական սկզբունքները, դառնում էր հասարակական առաջնադասութեան փայլուն փարոսներից մէկը: Եւ մեզանում էլ, այս բոլոր պարագաների դրոմամբ բարձրանում էին կրթական պահանջները, մեզանում էլ դպրոցը դառնում էր հասարակական հոգացողութեան առանձին կարեւոր առարկայ<sup>5</sup>»:

Մի ուրիշ վկայութիւն:

«Դորպատի նման մի մտաւոր կենտրոն էր Լազարեան ձեմարանը, — գրում է Լ. Մանուէլեանը, — որտեղ 40ական թուականներին թաղաւորում էր «հայկական ողին» եւ մշակում էր աշխարհիկ լեզուն: Ռ. Պատկանեանը<sup>6</sup> գրում է. «Քառասուն տարի սրանից առաջ մենք աւելի հայ էինք, հայերէնին աւելի տեղեակ. մենք զարգանում էինք հայկական գրականութեան մէջ եւ միայն հայ գրողներ լինելու համար էինք պատրաստում»: Մեր բանաստեղծի այս վկայութիւնն անհիմն չէ՛, եթէ նկատի առնենք, որ գրեթէ բացառապէս Լազարեան ձեմարանն էր մատակարարում ընտիր ուսանողներ Դորպատի համալսարանին<sup>7</sup>»:

Աւելի ցայտուն կերպով արտայայտուել է բանաստեղծ Մմբատ Շահազիզը, ձեմարանի

<sup>5</sup> Տե՛ս էջ 220:  
<sup>6</sup> Լ. Պատկանեանը աւարտել է Լազ. ձեմարանը 1848—1849 թ.:  
<sup>7</sup> Տե՛ս Լ. Մանուէլեան, «Պատմ. ուսու հայ գրակ.», Հ. Ա., էջ 89. Ընդգծումները մերն են:

նախկին սան եւ երկարամեայ ուսուցիչը ձեմարանում:

Երուանդ Շահազիզը «Մմբատ Շահազիզի Կենսագրութիւնը» իր աշխատանքի մէջ պատմում է հետեւեալը.

«Իւրիշ Վեսելովսկու գրուածներից մէկում՝ «Ռուսաց ազդեցութիւնը ժամանակակից հայ գրականութեան վրայ», 1909 թ. մէջ է բերուած Շահազիզի մի նամակը, որը պատասխան է գրուածքի հեղինակի նրան ուղարկած հարցաթերթի, թէ՛ նա իր ուսանողութեան օրերում ուսանակի ի՞նչ ազդեցութիւնների է ենթարկուած եղել:

— «Սօսը չի կարող լինել, որ իմ վրայ, ինչպէս եւ ամբողջ սերունդի վրայ, — պատասխանել էր Մմբատ Շահազիզը — ուժեղ ազդեցութիւն են գործել ռեֆորմների դարաշրջանը եւ նրա անդրադարձումը ուսուական կեանքի վրայ: «Լեւոնի վիշտը», որտեղ մերկացւում են հայ իրականութեան մութ երեւոյթները, զգալի չափով ստեղծուել է այն ոգեւորութեան շնորհիւ, որ առաջ էր եկել գիւղացիների ազատութեան հետեւանքով (1861 թ. փետր. 19): Յիշում եմ, թէ որքան սրտիս մօտ էի ընդունում այդ անցքը...»:

«Ընկերներիս շրջանում ես պատկանում էի այն երիտասարդների թուին, որոնք ամենից աւելի եռանդով էին հետեւում ուսու ամսագրերին, օրինակ, «Սովրեմեննիկ»ին<sup>8</sup> եւ եւ նրանց մէջ արծաթափայլ խնդրներին... «1859 թուի «Սովրեմեննիկ»ից է առնուած «Լեւոնի վշտի» երգերից մէկի բնագրանը: Դորբոյլուրովի «Միւրեւի բարեկամ», ես մեռնում եմ» բանաստեղծութեան ընթերցումը ներշնչեց ինձ սեփական մի բանաստեղծութիւն գրելու Իդէան, որն սկսում է համարեա այնպէս, ինչպէս Դորբոյլուրովի բանաստեղծութիւնը, բայց կրում է այլ բնոյթ եւ վերաբերում է հայերի վիճակին<sup>9</sup>»:

Ծանօթ իրողութիւն է, որ Միքայէլ Նալբանդեանը, որ եղել է ձեմարանում Հայոց լեզուի դասատու, ունեցել է լայն ծանօթութիւններ եւ նոյն իսկ սերտ բարեկամութիւն ժամանակի ուսու ականաւոր գրական, հասարակական ու քաղաքական գործիչների հետ,

<sup>8</sup> «Սովրեմեննիկ»ը (Современник) ամսաթերթ էր, որը վարում էր Չերնիշևսկին եւ ապա Դորբոյլուրովը եւ հանդիսանում էր ժամանակի մամուլի ամենալուրջ օրգանը եւ հետեւում էր այսպէս կոչուած «Արեւմտեանականների» ազատախոհ ուղղութեան:  
<sup>9</sup> Տե՛ս էջ 75. Ընդգծումները մերն են:

մասնաւորապէս Հերցէնի հետ, եւ վայելել է նրանց խոր յարգանքն ու անկեղծ համակրանքը:

Թէ՛ ի՛նչ խոր տպաւորութիւն է թողել Մ. Նալբանդեանը ձեմարանի աշակերտութեան վրայ եւ ի՛նչ ոգով է տարել նա իր դասաւանդութիւնը, — այդ մասին ստորեւ կը խօսինք, ուրիշ խնդրի կապակցութեամբ:

Այժմ մի այլ վկայութիւն եւս:

«Ռուսաստանի ազատարար շարժումը բարերար ազդեցութիւն ունեցաւ մանաւանդ հայութեան այն մասի վրայ, որ մօտիկ էր կանգնած այդ շարժմանը՝ Մոսկուայի յառաջադէմ երիտասարդութեան: Հայերի համար եւս բացուեց ապագայի դեղեցիկ հեռանկար եւ սկսուեց եռանդուն աշխատանք<sup>10</sup>»:

ձեմարանը իր ներսում, իր ներքին կեանքի մէջ եւս ունէր պայմաններ, որոնք զուգահեռաբար զրսում, արտաքին աշխարհում տեղի ունեցող զաղափարական հոլանքներին, տուեցի՞ն այնքան առատ հունձ:

«Որպէս զի հուստը յաջող հուճն տայ, անհրաժեշտ է նպաստաւոր մթնոլորտ», — ասել է պետական ականաւոր ուսու գործիչ Սպերանսկին:

Եւ արդարեւ դրսի մթնոլորտն ու ներսի մթնոլորտը, զուգորդուած իրար հետ, դարձրին Լազարեան ձեմարանը ազգային մշակոյթի զարգացման մի ազդակ ու ազգային ոգու մի վառ հնոց:

ձեմարանի ազգային ոգին ու սէրը դէպի ազգային մշակոյթի գանձերը՝ լեզուն, գրականութիւնը, պատմութիւնն ու կրօնը սերմանել ու աճեցրել էին ամենից առաջ իրենք Լազարեանները, սկսած ձեմարանի կառուցող Յովակիմ աղայից, որը եւ շարունակեցին նրան յաջորդած երկու գաւակները՝ Յովհաննէսն ու Սալատուրը ունենալով իրենց օժանդակ իրենց ընտանիքների անդամներին:

Այնուհետեւ նրանց զօրավիդ են հանդիսացել ու շարունակողները եղել՝ հայ ուսուցիչները, տեսուչներն ու վերատեսուչները:

Արամզարեան, Սերովբէ վարդապետ, Սալանթեան, Մ. Էմին, Մ. Մսերեանց, Ստ. Նազարեանց, Միքայէլ Նալբանդեան, Գլորդ Քանանեան, Մմբատ Շահազիզ, Մանուկ Սաղաթեան, Յարութիւն քահ. Պոպովեան, Քրիստափոր Քուչուկ-Յովհաննիսեան, գրակ.»:

<sup>10</sup> Տե՛ս Լ. Մանուէլեան, «Պատմ. ուսու հայ գրակ.»:

Կարապետ Կուսիկեան, Լեւոն Սարգսեան եւ մի շարք ուրիշները, — եղել են մի-մի լուսաստու ճրագներ, որ լուսաւորել են աշակերտութեան միտքը, ներշնչել ազգային ոգի մղել դէպի ազգային մշակոյթի դանձերի ուսումնասիրութիւնը:

Արդէն Սալլանթեանի օրօք 1829 թ. ձեւարանի աշակերտութիւնը լոյս է ընծայում «Մուզայք Հայաստանի» գրական ժողովածուն, սեփական գրական ստեղծագործութեան առաջին պտուղները:

Մ. Մսերեանը իր «Յիշատակարան»ում առաջ է բերել մի շարք ձօներ, ուղերձներ, ողբեր, գրուած ձեմարանի աշակերտների կողմից եւ գլխաւորապէս նուիրուած Լազարեաններին, նրանց կեանքի ուրախ թէ տխուր օրերի առթիւ:

Այնուհետեւ պիտի յիշատակել հայկական ներկայացումները՝ գրուած, որոնց յաճախում էին աշակերտները, եւ թէ ներսում՝ իրենց աշակերտների կողմից կազմակերպուած:

Տողերիս գրողը, օրինակ, 80ական թուականների վերջերքին, ձեմարանի աշակերտ, ներկայ է եղել Պետրոս Աղամեանի «Համլէթ»ի ներկայացման եւ ստացած խոր տպաւորութիւնը դեռ այսօր էլ շատ թարմ է:

Աշակերտութեան կազմակերպած ներկայացումների մասին ձեմարանում, մեզ թանկագին տեղեկութիւններ է տալիս Պրոֆ. Զինովեւը:

«Վերատեսուչ Ն. Դ. Դելեանովը օրօք, — գրում է Պրոֆ. Զինովեւը — մի նոր սովորոյթ էլ մտաւ ձեմարանի աշակերտութեան կեանքի մէջ, որը, մեզ թւում է, կարող է որոշ նշանակութիւն ունենալ հայ ժողովրդի զարգացման համար: Մի քանի տարի առաջ ձեմարանի աշակերտները Ծննդեան տօներին կազմակերպեցին ընտանեկան ներկայացում հայերէն լեզուով: Այդ ձեռնարկը այնպիսի մեծ յաջողութիւն ունեցաւ, որ այդ օրուանից սկսած ամէն տարի տեղի էին ունենում նման ներկայացումներ, արժանանալով Մոսկուայի հայ հասարակութեան բացայայտ համակրանքին. նա նոյն իսկ սիրով զբաղակցան նուէրներ էր տալիս երիտասարդ գերասաններին<sup>12</sup>»:

Հետագայում, 80ական թուականներին, ներկայացումներին փոխարինեցին չբեղ պարահանդէսները, որոնց մեծ հաճոյքով այցելում էին հայ եւ ուրիշ հասարակութիւնը, մանաւանդ ուրիշ գաղութների երկսեռ աշակերտութիւնը<sup>13</sup>:

Այդ պարահանդէսները առիթ էին տալիս ձեմարանի գիշերօթիկ աշակերտութեան շփման մէջ մտնել իրենց հասակակից ուրիշ երկսեռ երիտասարդութեան հետ եւ ծանօթութիւններ հաստատել նրանց ընտանիքների հետ:

Այդ պարահանդէսները բարերար ազդեցութիւն էին ունենում ձեմարանի աշակերտութեան դաստիարակութեան վրայ:

Մի որոշ չափով արտայայտիչ են հանդիսանում աշակերտութեան մտաւոր զգուշաների, գրականութեան հետաքրքրութեան ու ազգային ոգու՝ իրենց աշակերտների լոյս ընծայած ձեռագիր շարքաքերքերն ու ամսաքերքերը:

Ի վերջոյ, բերենք մի-երկու յիշողութիւն — վկայութիւններ նախկին սաների իրենց ուսուցիչների թողած բարոյական մեծ ազդեցութեան մասին:

«Էմիլիի դասախօսութիւնները, — գրում է Ռ. Պատկանեանը, — մի շարք գրական, պատմական կրթողական քարոզներ էին, որոնք խորունկ տպաւորութիւն էին դրածում մեր պատանեկական զգայուն սրտերի վրայ, որ շատերիս մէջ անջնջելի մնաց եւ շատերիս համար, թերեւս, մի տեսակ ուղեցոյց ասող<sup>14</sup>»:

— «ձեմարանի հայ ուսուցիչներից, — գրում է Եր. Շահազիզը, — Սմբատ Շահազիզը միայն եւ միայն հուանել է Միք. Նալբանդեանին, որի ուսուցչութիւնը թէեւ կարճատեւ է եղել, բայց նրա ցանած սերմերը ատոք պտուղներ են տուել, եւ նրա խօսքերը՝ «հայերէն մտածել պիտի է սովորել», ձեմարանի աշակերտութեան մէջ աւանդաբար անցել են սերնդէ սերունդ: Որքան մենք զիտենք, նրա այս կարճատեւ ուսուցչութեան ժամանակ ձեմարանում, Սմբատ Շահազիզը չի աշակերտել նրան, բայց ընդունել է նրա

<sup>13</sup> Հայերէն եւ ուրիշ լեզուներով աշակերտական ներկայացումները տեղի են ունեցել ձեմարանում նաեւ վերատեսուչ Մելլէրի օրօք՝ 1900ական թուականներին, — ինչպէս վկայում են թե՛ հիշատակները նուազ ձեմարանի նախկին սաները:  
<sup>14</sup> Լ. Մանուկեան, «Պատմ. ուրիշ. գրակ.», Մասն Բ., էջ 54:

<sup>11</sup> Ն. Դ. Դելեանովը վերատեսուչ է եղել 1856—1861 թթ.:  
<sup>12</sup> Տե՛ս Պրոֆ. Զինովեւ, «Պատմ. Լազ. ձեմ.», էջ 80:

թողած աւանդը եւ նոյնը յետագայում, իր ուսուցչութեան տարիներին, քարոզել իր աշակերտներին<sup>15</sup>»:

Ահա՛ եւ իր՝ Սմբատ Շահազիզի անձնական զգացումները ու մտքերի ոգեշունչ արտայայտութիւնը, որ նա կցել է «Լեւոնի վիշտը» պոէմային: Նրա այդ տողերին առիթ է ծառայել ձեմարանի 50ամեայ յորելեանը: Բերում ենք այդ գեղեցիկ կտորը ամբողջութեամբ:

«Յիսներորդ տարին ձեմարանիս հիմնադրութեան ահա լրանում է<sup>16</sup>, մի ցանկալի տպաւորութիւն բերելով բոլոր բարեացակամ սրտերին: Այո՛, յիսուն տարի ապրել է նա գեղեցիկ յառաջադիմութեամբ. յիսուն տարի գնացել է իւր գոթաբերին եւ լի ձախորդութեամբ ճանապարհը: Գոհութիւն նորա անցեալին, որ կազմել է մեզ մի դալարուն ներկայ, եւ գոհութիւն նորա ներկային, որ տալու է մեզ մի առաւել նախանձելի տպաւոր:

«Դեռար՛յս պատանիք, ժրջան եղէք այդ սուրբ ասպարէզի վերայ. պատրաստեցէք ձեզ որդի մարդկութեան եւ ազգութեան. ո՛հ, քանի՛ մեծակշիռ էր ձեր մատաղ կեանքի խորհուրդը, թէ ձեր թանկագին ժամանակը դորձ դնէիք նորա զարգացման եւ հաստատութեան, քանի՛ բարձրանալու էր ձեմարանը արժանի պարծանքով, որ պատրաստ է օժանդակել ձեզ ամենայն միջոցներով, եթէ միայն կամէիք ուսանել ազնիւ եւ անխոյզ աշխատասիրութեամբ:

«Ազնի՛ւ սրտեր, լցուեցէք ամենաքաղցր շօշափմունքով, պատրաստ կացէք բերել ձեր անկեղծ շնորհակալիքը այդ փառաւոր օրի տօնախմբութեան. դիտէ՛ք, — սիրոյ եւ երախտագիտութեան զգացմունքն է որ մեք ծարելի է կացուցանում մարդուս անունը: Շնորհակալ լինի՛ք խոստովանող սրտով պատուական Հոգարարձուիս Սաչատրոյ Յովսէփեան Լազարեան, որ լուսաւորեալ գործակցութեամբ բարեկարգել է վիճակը ձեմարանիս եւ ոչինչ չէ՛ խնայել նորա պայծառութեան համար թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

«Սաղազութիւն Ձեզ, ազգասէր Հիմնադիրք ձեմարանիս. Ձեր անունը անմոռաց է,

<sup>15</sup> Տե՛ս Եր. Շահազիզ, «Սմբ. Շահազիզի կենսագր.», էջ 17:

<sup>16</sup> Հեղինակը այդ տողերը գրել է 1864 թ. սեպտ. դիրքը լոյս է տեսել 1865 թ., ձեմարանի 50ամեակին: Ընդգծումները հեղինակին է:

Ձեր գործը անմահ, որ ահա վերստին անմահանում է այս տօնախմբութեան օրը:

Երախտագէտ Հեղինակը»:

\*

Այսպէս ձեմարանը արտաքին ու ներքին ազդակների շնորհիւ դարձաւ ազգային ոգու վառ հնոց եւ միաժամանակ հանդիսացաւ հայ մշակութային ու հասարակական կեանքի վերածնունդեան խոշոր գործօններից մէկը հայ կեանքի պատմական ամենաբարձրորոշ ժամանակաշրջանում:

Հայ ոգին ձեմարանում այնքա՛ն զօրեղ էր եւ այնքա՛ն ցայտուն իր արտայայտութիւնների մէջ, որ անգամ ուրիշ աշակերտները վարակուած էին այդ ոգով, հետաքրքրուած հայ գրականութեամբ, պատմութեամբ ու լեզուով, լցում համակրանքով դէպի հայ ժողովուրդը: Իւրիշ վեաներովսին, ձեմարանի նախկին աշակերտ, հանդիսանում է ամենագեղեցիկ օրինակներից մէկը:

Վերջապէս, բաւական է մի հայեացք ձգել ձեմարանի շրջանաւարտների անուանացանկի վրայ, որ բերուած է յաւելուածում, համոզուելու համար, թէ որքա՛ն հարուստ եւ արդիւնաւէտ հոնձք է տուել ձեմարանը հայ ժողովրդին վաղ ժամանակներից սկսած:

Տարակոյս չունենք, որ երբ մի օր դրուեց Լազարեան ձեմարանի ընդարձակ ու լրիւ պատմութիւնը, ապա նա կը կազմի հայ ժողովրդի վերածնութեան պատմութեան ոսկի էջերից մէկը:

ԳՂՈՒՆ Է.

ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՅԱՂԹԱՆԱԿ ԶԵՄԱՐԱՆՈՒՄ

Աշխարհարարի ու գրաբարի շուրջ մղուած պայքարի պատմութիւնն է՛, որ անելու ենք. այդ խնդիրը մեր նիւթից դուրս է. մենք սոսկ հակիրճ հայեացք ենք ուղղում նետել ձեմարանի այն դերի վրայ, որ նա խաղացել է իր ներսում աշխարհարարի յաղթանակի համար, որն այնուհետեւ անդրադարձել է ձեմարանի պատերից դուրս մղուած պայքարի զարգացման ու յաղթանակի վրայ:

Յաւօք սրտի, այս խնդրի լուսարանութեան համար էլ պակասում են տեղեկութիւնները, դոնէ՛ մեր ձեռքի տակ եղած աղ-

րիւնները մէջ հազիւ դտանք մի քանի ար-  
ժէքաւոր տուեալներ:

\*

19րդ դարի առաջին 50ամեակում, ինչ-  
պէս յայտնի է, գերազանցօրէն իշխել է գրա-  
բարը հայ կեանքի ու գրականութեան մէջ.  
Ճեմարանն այդ ժամանակաշրջանում բացա-  
ռութիւն չի կազմել: Միայն 60ական թուա-  
կաններին է, որ աշխարհաբարը հայ կեան-  
քում ստանում է քաղաքացիական իրաւունք,  
որն եւ ճանաչում է հանրութեան կողմից:  
Լազարեան ձեմարանն իր սկզբնական  
շրջանում ունեցել է գրաբարի մի շարք ծայ-  
րայեղ պաշտպանները: Այդպիսիք էին՝ Մի-  
քայէլ Ծ. Վ. Սալլանքեանը, մագիստրոս  
Մսեր Մսերեանցը՝ ձեմարանի կրօնուսոյցը,  
Մկրտիչ Էմինը՝ հայկարանութեան դասա-  
տուն:

Մրանք աշխարհաբարին նշանակութիւն  
չէին տալիս, համարելով այն անմշակ, ան-  
կանոն ու գոհճիկ...:

Մսեր Մսերեանցը նոյն իսկ 1854 թ.,  
երբ գրելիս է եղել իր «Յիշատակարանը կե-  
նաց եւ գործոց Լազարեան տոհմի», գրել է  
այդ Յիշատակարանը ո՛չ միայն գրաբար լե-  
զուով, այլ եւ հարկ է համարել մի կրթոտ  
ու խիստ ելոյթ ունենալ աշխարհաբարի դէմ,  
իր նախարանի մէջ:

«Ի մատենագրութեանս յայսմիկ՝ —  
գրում է հեղինակը — գրոցն, այն է գճինն,  
զկանոնաւորն եւ գճարագատն մերի կիրարկի  
բարբառ, եւ ո՛չ դնորն չմշակեալ, իմա՛  
գոամկացն՝ զկողմանց կողմանց զԱշխարհիկն  
անուանեալ՝ ազխագուր (կոշտ) լեզու: Զի  
որչափ համեղական եւ ազգոյ եւ գեղեցիկ ա-  
ռաջինն է, այնչափ անհամ է վերջինն, թոյլ,  
տգեղ, անհեթեթ, եւ զուրկ միանգամայն ի  
կարի կարեւորացն կանոնաց ուղղախօսու-  
թեան, որպէս եւ շատք իսկ ո՛չ յաննշանից  
արանց՝ որ քաջսճուտք լեզուիս ճանաչին,  
վկայեն անաչառապէս»:

Մկրտիչ Էմինը եւս եղել է գրաբարի հա-  
մոզում եւ անգիջող պաշտպան:

«Երբ 1858 թուին, — պատմում է Մ.  
Էմինի կենսագրութեան մէջ Երուանդ Շահա-  
զիզը, — սկսուեց հրատարակուել «Հիւսիսա-  
փայլը» եւ ասպարէզ իջան գործելու Ս. Նա-  
զարեանցը, Մ. Նալբանդեանցը եւ դոցա հա-  
մախոհները, ներհակ կուսակցութեան կողմն  
անցաւ Մ. Էմինը, առանց իրան աշխատանք  
տալու հասկանալու գործի հանգամանքները,

առանց յարգելու հակառակորդների կարծիք-  
ները եւ ըմբռնելու նոր քարոզիչների ասած-  
ների իսկական իմաստն ու զօրութիւնը»  
(էջ 26):

Բայց կեանքի բնական զարգացման հրա-  
մայականը, ժամանակի ուղին իր ստեղծա-  
գործ շունչով ստիպում են հնի ամենակա-  
տաղի իսկ պաշտպաններին գլուխ խոնարհել  
ու բռնել գիշումների ճամբան:

Այդպէս էլ եղաւ գրաբարի պաշտպան-  
ների հետ...:

Դեռ 1827 թ. Սալլանքեանը հարկա-  
դրուած է լինում հրատարակել իր «Քերա-  
կանութիւն գրաբար լեզուի Հայոց նորա-  
կարգ ոճով...»:

1850 եւ ապա 1861 թթ. Մսեր Մսե-  
րեանցը, տուրք տալով ժամանակի պահան-  
ջին, հրատարակում է կրօնի իր չարս դասա-  
գրքերը նոյնպէս աշխարհաբար լեզուով:

Ստեփանոս Նազարեանցի հեղինակու-  
թիւնները, լոյս տեսած 1851 թ., 1853 թ.,  
1857 թ. նոյնպէս աշխարհաբար են:

Այդ հարկադրանքին գործածել աշխար-  
հաբարը, ամենից առաջ հէնց ձեմարանի ա-  
շակերտներն էին բերում իրենց օգնութիւնը:

Ձեմարանի հիմնադրութեան առաջին  
իսկ օրուանից աշակերտները, մասնաւորա-  
պէս Լազարեանների որդեգիրները, գալիս  
էին Արեւելեան Հայաստանի խուլ անկիւննե-  
րից, գիւղերից ու քաղաքներից, երեսներ,  
որոնք խօսում էին իրենց գաւառների բար-  
բառով: Այդ ուսմիկ երեսանների ներխու-  
ժումը ձեմարան օր ըստ օրէ ուժեղանում էր  
եւ նրանց թիւը բազմանում: Ձեմարանի դա-  
սատուները մատնուած էին անելի՛՝ երեխա-  
ները գրաբարը չէին հասկանում...: Եւ ու-  
սուցիչները ստիպուած եղան խօսել նրանց  
հասկանալի աշխարհաբար լեզուով: Այսպէս  
հետզհետէ աշխարհաբարը դառնում է ձե-  
մարանի գործածական լեզուն:

«Լազարեան ձեմարանում է սկսում  
մշակուել մի պարզ, հանրամատչելի աշխար-  
հաբար լեզու, — գրում է Լէօն: Սկզբը  
դրեց Յովակիմ Լազարեանը. ապա նրա  
գործը շարունակեցին ձեմարանի ուսուցիչ-  
ները: Աշակերտները հաւաքում էին զանա-  
զան երկիրներից. ամէն մէկը բերում էր իր  
երկրի խօսակցական հայերէնը, գաւառա-  
բարբառը: Ուսուցիչները հետեւում էին  
նրանց խօսակցութիւններին, մաքրում էին  
լեզուն գաւառաբանութիւններից, օտար բա-

ուրից եւ մշակում էին մի հարազատ հայե-  
րէն, որ դրաբար չէր, բայց գաւառաբարբառ  
էլ չէր, այլ բոլոր տեղերից եկածներին հաս-  
կանալի մի լեզու<sup>1</sup>»:

Մի ուրիշ հեղինակ վկայում է.

«Լազարեան ձեմարանը հիմնուելով  
1815 թ. մի որեւէ 35 տարուայ ընթացքում,  
այն է՝ 1850 թ. ստեղծել էր իր լեզուն»:

Այդ լեզուն՝ աշխարհաբարն էր, որ ար-  
դէն հաստատել էր ձեմարանում իր տիրա-  
պետութիւնը:

Ահա եւ մի այլ հեղինակաւոր վկայու-  
թիւն՝ Սեդրակ Մանդիկեանի յուշը: Նա սո-  
վորել է ձեմարանում գրեթէ միաժամանակ  
Սմբատ Շահազիզի հետ:

Ս. Շահազիզը աւարտել է ձեմարանի  
գիմնագիտական դասընթացը 1859—1860  
ուս. տ., իսկ Լիկէոնը՝ 1861—1862 թթ.:

Սեդրակ Մանդիկեանը աւարտել է ձե-  
մարանի միջնակարգ դասընթացը՝ երկու  
տարի ուշ՝ 1862—1863 թթ.:

Երուանդ Շահազիզը Սմբատ Շահազիզի  
կենսագրականի մէջ առաջ է բերում Սեդրակ  
Մանդիկեանի հետեւեալ յուշը.

«Սեդրակ Մանդիկեանը, որ ձեմարանի  
այդ ժամանակուայ աշակերտներից է եղել,  
վկայում է, որ աշակերտները սիրելիս են  
եղել լսել Սմբատ Շահազիզի սահուն եւ «ուռ-  
ճացած» աշխարհաբար լեզուն, որ իր կա-  
նոնաւորութեամբ, իր ճիւղութեամբ եւ  
քաղցրահնչութեամբ, իրրեւ մի նոր չլուած  
ու չտեսնուած բան, տարբեր եղածներից,  
զրաւում, հմայում էր ամէնքին» (տե՛ս Սե-  
զրակ Մանդիկեանի յորեւիտական նամակը  
«Սմբատ Շահազիզեանի երեսնամեայ յորե-  
ւեանը» գրքի մէջ)<sup>2</sup>:

Սմբատ Շահազիզը առանձնապէս խոշոր  
դեր է կատարել աշխարհաբարի մշակման,  
ինչպէս եւ նրա ժողովրդականացման գոր-  
ծում թէ՛ ձեմարանում եւ թէ՛ ձեմարանից  
դուրս:

«1860 թ., Ս. Շահազիզը — պատմում է  
Եր. Շահազիզը — աւարտում է Լազարեան  
ձեմարանի գիմնագիտական ընթացքը եւ  
մտնում է Լիկէոն, որը բաղկացած էր եր-  
կու դասարաններից եւ կազմում էր ձեմար-  
անի արեւելագիտութեան մասնագիտական

եթիւնը եւ ութերորդ բարձր դասարան-  
ները: Այստեղ էլ նա իր գլխաւոր ուշադրու-  
թիւնը դարձնում է հայերէնի վրայ, անդա-  
դար կարգալով, անդադար կատարելագոր-  
ծուելով գրաբարագիտութեան մէջ եւ հետ-  
զհետէ կոկելով, մշակելով իր աշխարհաբար  
լեզուն, եւ նախապատրաստուելով ու տալով  
նրան այն ձեւն ու գոյնը, որ մենք յետոյ տես-  
նում ենք «Լեւոնի վշտի» մէջ<sup>3</sup>»:

Այնուհետեւ, երբ 1873 թ. վախճանում  
է Մսեր Մսերեանցը, Ս. Շահազիզն է ստան-  
ձնում հայերէնի դասերը բարձր դասարան-  
ներում. իր այս պաշտօնում, նա վերացնում  
է ճարտասանութեան դասաւանդութիւնը,  
գործածութիւնից հանում Մ. Էմինի եւ Սալ-  
լանքեանի քերականութիւնները եւ պատ-  
րաստում է, իրրեւ քերականութեան ձեռ-  
նարկ, իր սեփական ձեռագիր տետրակը աշ-  
խարհաբարի համար<sup>4</sup>: Բացի այս բոլորից,  
որ գլխաւորն է, նա մտցնում է աշխարհա-  
բարի շարադրութիւնը<sup>5</sup>:

Ինչպէս յայտնի է 1865 թ. է լոյս տեսել  
նրա «Լեւոնի վշտը» աշխարհաբար լեզուով,  
ուր ներբողում է այն, ասելով, որ՝

«Ժամանակակից գրում եմ լեզուով,  
Որ ամենայն մարդ կարգայ, հասկանայ...»:

Նոյն պօէմայի երրորդ գլխում նա ար-  
դէն հանդէս է դալիս պայքարողի դերում յօ-  
գուտ «Ժամանակակից լեզուի» եւ պարսա-  
ւանքներ ուղղում գրաբարի մոլեռանդ պաշտ-  
պանների հասցէին:

Միքայէլ Նալբանդեանի, թէեւ կարճա-  
տեւ ուսուցչութեան օրով, կատարած դերը  
ձեմարանում աշխարհաբարի նկատմամբ  
եղել է ո՛չ պակաս զօրաւոր: Այդ մասին  
վերը արդէն յիշատակեցինք:

\*

Այսպէս, առանց չափազանցութեան կա-  
րող ենք ասել, որ Լազարեան ձեմարանը եղել  
է Հայոց լեզուի, Հայոց գրականութեան,  
պատմութեան ու լեզուագիտութեան մի ան-  
պաշտօն ակադեմիա — «Մոսկովեան Աքէմֆ  
Հայոց»:

Հետեւելով ժամանակի յառաջադէմ ու  
ազատարար ոգուն, ձեմարանը աշխարհա-

<sup>1</sup> Տե՛ս Լէօ, «Ստ. Նազար. կենսագր.», Հ. Ա.,  
էջ 39:

<sup>2</sup> Տե՛ս Եր. Շահազիզ, «Սմբ. Շահազիզի կեն-  
սագր.», էջ 24:

<sup>3</sup> Անդ՝ էջ 23:

<sup>4</sup> Եւ լաւ յիշում եմ, որ հէնց այդ տետրակով էլ  
եւս եւ իմ դասընկերներն էինք սովորում 80ական  
թուականների վերջերքին եւ 90ականի սկիզբներին:

<sup>5</sup> Տե՛ս անդ, էջ 26:

բար լեզուի խնդրում էլ մեծապէս նպաստել է այն պայքարին, որ տասնեակ տարիներ մղուել է աշխարհաբարի յաղթանակի համար ձեմարանում ու ձեմարանի պատերից դուրս ազգային հասարակական կեանքի մէջ:

Այդ պայքարի մէջ ուրախալին ու ողջունելին, ի դէպ, այն է, որ աշխարհաբարի կողմնակիցներն ու պաշտպանները չհետեւեցին գրաբարի պաշտպանների տղեղ օրինակին եւ երբեք ո՛չ նուաստացրին, ո՛չ ուրացան գրաբարի մեծ արժէքը, նրա լեզուական հարստութիւնը, նրա ճկնութիւնը, նրա կանոնադրութիւնը, նրա հմայիչ զեղեցկութիւնն ու քաղցրահնչութիւնը:

Աշխարհաբարի յաղթանակը մի անգամ եւս եկաւ ապացուցելու, որ հասարակական կեանքի բնականոն հոլովոյթի ընթացքը անկարելի է փոխել մարդկանց քմահաճոյքով, որ պատմական յառաջադիմութեան անխընդհանրին է յետ մղել նոյն իսկ ամենաուժեղ անհատների կամքով, որ նա զարգանում է կեանքի մէջ իշխող կոյր ոյժերի անդրդուելի հարկադրանքի ներքոյ:

Ժամանակի մտաւորականութեան իմացականութեան աստիճանից է կախուած ըմբռնել ժամանակի ոգին ու պահանջները. ըմբռնել տուեալ հասարակական հաւաքականութեան պատմական զարգացման ուղին եւ ըստ այնմ գործել:

Աշխարհաբարի պաշտպանները, մասնաւորապէս Լազարեան ձեմարանը պարծանքով կարող են արձանագրել, որ ՅՕական թուականների Հայոց չքեղ վերածնութեանը ո՛չ միայն անմաս չեն մնացել, այլ եւ բերել են իրենց խոշոր վաստակը:

(Շարունակելի:)

**ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀՅՑ ՄՅԵՎՈՒԹԵՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

(Շարունակութիւն:)

**ՕՐԹԱԳԻՒՂ**

1. Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1844)

Օրթագիւղի հնագոյն ընկերութիւնն է «Ս. Թարգմանչաց Ընկերութիւնը», հիմնուած 1844ի վերջերը: Առաջին յիշատակութիւնը Իզմիրահայ թերթը՝ Արշալոյս Արաբատեան<sup>1</sup> կ'ընէ, գրելով. «Մեր բարեմիտ ընթերցողները գուցէ կարծեն թէ ա՛լ ուրիշ նորահիմն ընկերութիւն մը չունինք ծանուցանելու. բայց այնպէս չէ, կը սխալին. ինչու որ ուսումնասիրական եւ ընկերական գովելի եռանդ մըն ալ Կոստանդնուպոլսոյ Օրթագիւղը յայտնուեցաւ. եւ այնտեղը բնակող մեծապատիւ հայրենասէր Ամիրայից հաւանութեամբ եւ խորհրդով՝ Ս. Թարգմանչաց Ընկերութիւն անունով միաբանութիւն մը հաստատուեալ է, որուն նպատակը՝ նոյն գեղին վարժարանը բարեկարգել է. եւ ինչպէս կը լսենք, հայկաբանութեան եւ գաղղիական լեզուին համար արժանաւոր ուսուցիչներ հաստատելին ի գատ, մէկ երկու օգտակար արհեստից համար ալ վարպետներ կարգելու են, այսինքն՝ դերձակութեան եւ կոշկակարութեան. որպէս զի դպրատան աղքատ տղաք օրը մէկ երկու ժամ յիշեալ արուեստից հետեւելով նոյն վարժարանին մէջ՝ անկէց ելլելու ատենը՝ կարող ըլլան իրենց սպրուստը դիւրաւ շահելու ձեռքերին ծառայական պատրաստ արհեստ մը ունենալով»:

Օրթագիւղի «Ս. Թարգմանչաց» դպրոցի ծագումը՝ Շնորհք Ամիրայէն, 1790ին, կը համարուի<sup>2</sup>, բայց կրնայ աւելի հին ալ ըլլալ:

Մասիսի համեմատ<sup>3</sup> Ընկերութիւնը 1856 Յունիս 1ին վերակազմուելէ վերջ՝ մեծ հոգ տարած է վարժարանին յառաջդիմութեան:

Մեղք որ անձանօթ կը մնան Ընկերութեան թէ՛ հիմնադիրները, թէ՛ վերակազմողները եւ թէ՛ Կանոնադիրը, որոնք ո՛չ մէկ տեղ յիշուած են:

<sup>1</sup> 1845 թ. 224, Յունուար 13ին:  
<sup>2</sup> Տօթթ. Վահրամ Յ. Թորոսեան, Երեմիա 2է-1է պիտի Ստամբուլոյ Պատմութիւն, Վիեննա 1932, էջ 669:  
<sup>3</sup> 1857, թ. 280:

2. ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Հանրային Ընթերցարանի մը բացումին առաջին գաղափարը, եթէ չենք սխալիր, Օրթագիւղի Հայոց կը պատկանի, որոնք 1847 Դեկտ.ին Ընկերութիւն մը կը հաստատեն «Վերծանութեան Թանգարանի Ընկերութիւն» անունով, որ 1848 Յունուար 1ին բացումը կ'ընէ «Վերծանութեան Թանգարան»ին, այսինքն՝ Ընթերցարանին:

Այս թանկագին տեղեկութիւնները կը պարտինք Իզմիրի հայ թերթին, Արշալոյս Արաբատեանի խմբագիր՝ Ղուկաս Գ. Պալքապետեանի, որ մասնաւոր հոգածութեամբ ետեւէ եղած, հաւաքած եւ օրը օրին հաղորդած է ինչպէս այս՝ նոյնպէս ուրիշ բազմաթիւ հին հայ Ընկերութիւններու ծագման պատմութիւնը:

Արշալոյս Արաբատեան<sup>4</sup> «Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան» հիմնումը յիշելէ վերջ՝ կու տայ Ընկերութեան Կանոնադիրը, ուր հիմնադիրները նախ կը շեշտեն թէ մինչեւ այդ ատեն «Ազգերնու մեծ պակասութիւններէն մէկն է... Վերծանութեան տեղի մը, ուր այլեւայլ դրքեր ժողոված, կարդալ ուզողը կարենայ լիովին իր փափաքը լեցնել...: Այս պակասութիւնը՝ հին ատենը մեր ազգին մէջ Դիւաններն ու Գրքատունները կը լեցնէին».  
«յետոյ կ'իմացնեն թէ թէեւ հասարակաց Ընթերցարանի մը բացումը «անյաղքելի արգելիքներով խափանուած էր»՝ սակայն «Վերծանութեան Թանգարանի Ընկերութեան» հիմնադիրները յաղթելով ամէն արգելքի՝ անոր բացումը կը կատարեն՝ «Չտարակուսելով ամէն ընթերցասիրաց մէկտեղ աւ բանիս տալու ձեռնառութեանը վրայ»<sup>5</sup>:

«Թանգարան»ի պետ նշանակուած է՝ յետոյ քահանայ ձեռնադրուած՝ Տէր Սահակ, որ այդ ատեն 20 տարեկան պատանի մ'էր<sup>6</sup>:

Ահա՛ Ընկերութեան «Պայմանք»ը (Կանոնադիր).  
«Ա. Միջազգի մէջ հաստատուած վերծանութեան Թանգարանը սահմանուած տեղի մը ունի, ուր միայն Թանգարանին ընկերները պիտի կարենան մտնալ ու գրոց ընթերցմանը վայելել:

Բ. Ընկերութեան մասնակից ըլլալու համար տարուէ տարի վճարելու կանխիկ տուրքն է 60 դուրուշ մէկ բաժին: Երկու

<sup>4</sup> 1847, թ. 301:  
<sup>5</sup> Անդ, 1848, թ. 303:  
<sup>6</sup> Նաբ Լուր, Կ. Պ. 1925, թ. 226:

երեք կամ աւելի բաժին վճարողները Ընկերութեան մեծ շնորհ ու պատիւ ըրած կը համարուին:

Գ. Ընկերութիւնը այս բաժիններէն ստացած դրամովը հետզհետէ պիտի գնէ ու գետեղէ Թանգարանին մէջ նախ՝ ամէն հայերէն լեզուով հրատարակած լրագիրները, երկրորդ՝ նախնեաց մատենագրութիւնները, երրորդ՝ նորոց եւ հետզհետէ ելլելու պիտանի գիրքերը, չորրորդ՝ եւ ամէնէն վերջը՝ թէ որ կարող ըլլայ նէ, օտար լեզուներէ կարելոր գրեանք:

Դ. Ընկերութեան ելքն ու մուտը եւ գրոց վճարքը տնօրինելու համար մէկ Տեսուչ եւ երեք անշահասէր ու հաւատարիմ մարդիկ սահմանուած են, որոնցմէ մէկը գիտնական, որպէս զի այն գիտնականը՝ երկու ընկերաց խորհրդովը գնելու գրոց որոշումը ընէ, որոնց մէջ բարուց կամ կրօնից դէմ ամենեւին պիտի չգտնուի:

Ե. Աս պաշտօնատէրները հաստատուն են ու միայն անհաւատարմութեան կամ անկարութեան պատճառաւ կրնան փոխուիլ, որպէս զի շիթութեան առիթ չըլլայ:

Զ. Թանգարանէն գիրք մը դուրս առնել ուզողը (լրագիրները ամենեւին դուրս չեն ելլար) իր ստորագրութեամբը մուրհակ մը կը ձգէ պահապանին, որուն մէջ տուած իրին անունը ու թիւը կը յիշատակէ խոստամբետ դարձնելու մէկ ամսուան միջոցի մէջ: Իսկ եթէ գիրքը աղտեղէ կամ կորսնցնէ, կը պարտաւորի նոյն անձը անոր դինը Ընկերութեան վճարելու:

Է. Թանգարանի Ընկերութեան սենեակը ներկայ տարուոյս սկիզբը բացուեցաւ ի Միջազգի: Այս Ընկերութեան ով որ կ'ուզէ կրնայ գրուիլ նախ՝ Միջազգիի դպրաց սենեակը, երկրորդ՝ Իւսկիւտար՝ սուրբ Սաչ եկեղեցին մահտեսի տէր Գրիգորին քով, երրորդ՝ Պալատ սուրբ Հրեշտակապետ եկեղեցին տէր Մաղաքիային քով, չորրորդ՝ Պղտի նոր խանը կեսարացի Պօղոս աղային սենեակը:

Միջազգի ի 12 յունվարի 1848<sup>7</sup>»:  
Ընկերութիւնը քիչ վերջ հարկ կը տեսնէ քանի մը փոփոխութիւն ներմուծել իր եօթը կանոններու մէջ եւ կը կազմէ 9 կանոններ եւս, որոնք հրատարակուած են Արշ. Արաբատեանի կողմէ<sup>8</sup>, որ կը գովէ Ընկերու-

<sup>7</sup> Արշալոյս Արաբատեան, 1848, թ. 303:  
<sup>8</sup> Անդ, թ. 310: